

ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ

ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆՔ

1989 թ. հունիսին, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ նշանակվելով Արցախի թեմի Գանձասարի վանքի վանահայր, ձեռնամուխ եղանք վանական համալիրի վերանորոգչական և բարեկարգչական աշխատանքներին, որոնք 1990 թ. աշնանը լայն թափ ստացան:

Գանձասարի վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու գավթի վերանորոգման ընթացքում հայտնաբերվեցին մինչև այժմ անհայտ երկու արձանագրություն:

Առաջինը բացարձակապես անհայտ էր, ծածկված հաստ աղաշերտով և ամբողջովին աննկատելի: Քանդման-վերաշարման աշխատանքների ընթացքում մի քանի տեղերում աղաշերտը թափվեց և տակից տառեր հայտնվեցին: Քարերը մաքրվեցին աղաշերտից, և արձանագրությունն ընթերցվեց: Սույն արձանագրությունը գտնվում է գավթի հյուսիսային մուտքի վերևի աջ անկյունում: Բովանդակությունը հետևյալն է.

ԿԱՄԱՒ(Ն ԱՍՏՈՒԾՈ)Յ ԵՍ ԱԾ(Ո)
Տ ՈՐԴԻ ՏԻԱՆԱ ՄԻ(ԱԲԱ)
ՆԵՑԱ ՍՈՒՐԲ ՈՒԽՏ(ԻՍ)
ԵՒ ՍՈՔԱ ՏՎԻՆ ՀԱՄԲ
ԱՐՁՄԱՆ :Ա: ՊԱՏԱՐԱ(Գ)

Այս արձանագրությունից ներքև աղաշերտի տակից հանվեց ևս մի արձանագրություն, որի միայն վերջին չորս տառերը Ս. Բարխուդարյանը ընթերցել և հրատարակել էր «Հայ վիմագրության դիվանի» Ե պրակում, 171ա համարի տակ (էջ 63): Իր ամբողջության մեջ արձանագրությունը հետևյալ տեսքն ունի.

ԵՍ ԹՈՌԱԿ ԱՎ ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՆՈՐ ՔՅՈՒՄԹ

ԵՍ ԱԹՈՌԱԿ
ԱՎ ՊԵՏՐՈՍ
ՎԱՐԴԱՊ(ԵՏ)Ս
ՆՈՐ/Ո/Ք(Ե)Ց ՌՄ Թ. (1751)

Սույն արձանագրությունից հայտնի է դառնում, որ Գանձասարի վանքը պատմությանը հայտնի երեք վերանորոգումներից (1551, 1781, 1907) բացի ենթարկվել է ևս մեկ նորոգման՝ 1751 թվականին, որի ընթացքում են հավանաբար վերաշարվել գավթի հյուսիսային մուտքին հարող պատերը:

Այս երկու նորահայտ արձանագրություններից բացի մեզ հաջողվեց նաև երկու հայտնի արձանագրությունների մեջ որոշ ուղղումներ կատարել: Այսպես, Ս. Բարխուդարյանի «Դիվանում» հրատարակված 144 համարի արձանագրությունը (էջ 57) թերի էր, իսկ անձնանունները սխալ էին վերականգնված: Աղաշերտի մաքրումից հետո արձանագրությունը ամբողջովին վերականգնվեց: Այն այսպիսին է.

ՅՈՒՍՈՎՆ ԱՆՄԱՀԻՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Ց ԵՍ (ԳԵ)
ՐԳ ՁԱՐԱԲԵՐԴԵՑԻ ԱՆԱՐԺ
ԱՆ ՔԱՀԱՆԱ ՈՐԴԻ ԾԵՐԱ
ԲԱՆՈՒԱՆԱ ՏՎԻ ՁԻՄ ՀՈԳ
Ո ԲԱԺԻՆ Ի Ս(ՈՒՐ)Բ ՈՒԽՏՍ ՍՈՔԱ (:Բ: Ժ)
ԱՄ Տ(ԵԱՌ)ՆԴԱՌԱՁԻՆ ՏՎԻՆ ԻՆՁ Ե(Ի ԾՆ)
ՈՂԱՑ ԻՄՈՑ ԿԱՏԱՐԻՁՔՆ ԱԻՐՀՆԻՆ (ՅԱՍՏՈՒԾՈՅ)

Հաջորդ արձանագրության մի մասը չի պահպանվել, իսկ մնացած մասն էլ ծածկված էր աղաշերտով: Ժամանակին սրա պահպանված մասը ընթերցել էր Հ. Օրբելին, արձանագրություն, որի մի մասը հետագայում ջարդոտվել է: Աղաշերտի մաքրումից հետո այս արձանագրությունը, որը հրա-

տարակված է «Դիվանում» 164 համարի տակ (էջ 62), հետևյալ տեսքն ունի.

(Ե)Ս ԳՐԻԳՈՐԷՍ Ե(Ի ԵՂԲԱ)
ՅՐ ԻՄ ԱԴԱՄ ՄԻ(ԱԲԱՆ)
ԵՑԱ Ս(ՈՒՐ)Բ ՈՒԽ(ՏԻՍ ԵՒ ՍՈ)
ՔԱ ՏՎԻՆ :Բ: ԺԱ(Մ ՓՈԿԱՍ)
ՈՒ ՏԱՒՆԻՆ ԶԻՄ ԱՂԲԱՒՐ ՈՐԴԻՆ
ՀԱՒԱԴԵՂԻ ԿԱԹՈՂԻԿԻՆ ՏՎԱՒ

ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԶԱՊԱՀՅԱՆ